ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբեր, 2024 թվականի № 75-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 78-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 15-րդ կետերը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 25-րդ կետերը, ինչպես նաև «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2024 թվականի նոյեմբերի 7-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N Ռ/24-01-100 գրությունը և հաշվի առնելով Ընկերության աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի № 78-Լ որոշման № 3 հավելվածով հաստատված՝ 2024 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

2. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի № 78-Լ որոշման № 4 հավելվածով հաստատված՝ 2024 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

08 նոյեմբեր, 2024 թվականի
ք. Երևան